

# Մենթոր և գործընկեր դպրոցների հաշվետվություն

*Դպրոցի ամբողջական անվանում:*

ԵՊՀ-ին առընթեր Ա.Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոց

*Ո՞ր դասարաններում, ինչ առարկաներից, և քանի դաս է անցկացվել:*

Դասարանում դասերի քանակ	ԱՌԱՐԿԱ, ԴԱՍԵՐԻ ԶԱՆԱԿ	ԱՌԱՐԿԱ, ԴԱՍԵՐԻ ԶԱՆԱԿ
7-րդ դասարանում դասերի քանակ	Մաթեմատիկա, 3 անգամ	Ֆիզիկա, 3 անգամ
8-րդ դասարանում դասերի քանակ	Մաթեմատիկա, 3 անգամ	Ֆիզիկա, 3 անգամ
9-րդ դասարանում դասերի քանակ	Մաթեմատիկա, 3 անգամ	Ֆիզիկա, 3 անգամ

*Մասնակիցների թիվ և ձևաչափ:*

Դասարանում մասնակիցների թիվ	Ձևաչափը՝ առաջադրանքների լուծում և պատասխանների ստուգում էլ. փոստի համակարգի օգնությամբ,	Ձևաչափը՝ առաջադրանքների լուծումների քննարկում հեռավար դասի օգնությամբ,
7-րդ դասարանում մասնակիցների թիվ	15 աշակերտ (9-Դպրաբակ, 2-Փամբակ-Դարանակ, 4-Սառնակունք)	2 աշակերտ (2-Փամբակ-Դարանակ-Տիգրան Սարգսյան՝ մաթ.)
8-րդ դասարանում մասնակիցների թիվ	27 աշակերտ (10-Դպրաբակ, 9-Փամբակ-Դարանակ, 8-Սառնակունք)	25 աշակերտ (9-Փամբակ-Դարանակ-Նիկիտա Պողոսյան՝ մաթ., 8-Սառնակունք-Մեխակ Հայրապետյան՝ ֆիզիկա, 8-Սառնակունք-Նիկիտա Պողոսյան՝ մաթ.)
9-րդ դասարանում մասնակիցների թիվ	18 աշակերտ (5-Դպրաբակ, 4-Փամբակ-Դարանակ, 9-Սառնակունք)	19 աշակերտ (5-Դպրաբակ-Վալերի Հայրիկյան՝ մաթ., 9-Սառնակունք-Մեխակ Հայրապետյան՝ ֆիզիկա, 5-Դպրաբակ-Մեխակ Հայրապետյան՝ ֆիզիկա)

**Լրացուցիչ:** Ներքին պայմանավորվածության համաձայն ծրագրից դուրս հեռավար դասեր են անցկացվել հայոց լեզվից՝ 9 աշակերտ-Սառնակունք-Անժելա Նազարեթյան, թեման՝ «Կետադրություն», պատմությունից՝ 15 աշակերտ- Փամբակ-Դարանակ-Աշոտ Եղիազարյան, թեման՝ «Ինչ է ցեղասպանությունը», քիմիայից՝ 10 աշակերտ-Դպրաբակ-Քնարիկ Բոդյան, թեման՝ «Անօրգանական միացությունների հիմնական դասերը», 60 աշակերտ-Դպրաբակ, Փամբակ-Դարանակ, Սառնակունք - Դավիթ Մինասյան, թեման՝ ՏՀՏ հմտությունների տիրապետում և էլ. փոստի համակարգի օգտագործում:

**Մենթոր և գործընկեր դպրոցների համագործակցության ինչպիսի մոդելներ են կիրառվել և ինչ ռեսուրսների օգտագործմամբ:** Համագործակցության համառոտ նկարագիր:

Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցը համագործակցում էր Գեղարքունիքի մարզի գ. Դպրաբակի և գ. Փամբակ-Դարանակի ու Սյունիքի մարզի գ. Սառնակունքի միջնակարգ դպրոցների հետ:

Ծրագրի համաձայն նախատեսվում էր անցկացնել դասեր ֆիզիկա և մաթեմատիկա առարկաներից՝ նպատակը՝ ծանոթացնել տրամաբանական առաջադրանքների լուծման ձևերին ու մեթոդներին, ինչպես նաև S2S հմտությունների օգտագործմանը: Այս աշխատանքներին ներգրավվել էին թվով 60 աշակերտ գործընկեր դպրոցների 7-րդ, 8-րդ և 9-րդ դասարաններից և 19 ուսուցիչ /10-ը՝ գործընկեր դպրոցներից և 9-ը՝ ֆիզմաթ դպրոցից/:

Դասընթացների անցկացման ժամանակ կատարվել են մեկական այցեր գործընկեր դպրոցներ, որի ընթացքում ծանոթացել ենք ընդհանուր իրավիճակին, առկա տեխնիկական և կապի միջոցներին, յուրաքանչյուր դպրոցին նվիրել մեկական նոթբուկեր և տպիչ-սկաներներ աշխատանքները արդյունավետ անցկացնելու համար: Գործընկեր դպրոցների ուսուցիչները գարնանային արձակուրդների ժամանակ այցելել են ֆիզմաթ դպրոց, ծանոթացել ուսուցիչների հետ և մշակել համատեղ ծրագրեր ուսուցման գործընթացը դյուրին կազմակերպելու համար: Բացի այդ, Գեղարքունիքի մարզի գ. Փամբակ-Դարանակի երկու աշակերտ ցանկություն են հայտնել գարնանային արձակուրդների ժամանակ ֆիզմաթ դպրոցում ուսումնասիրել ֆիզիկա առարկայի որոշ թեմաներ, որն էլ կատարվել է:

Համագործակցության ընթացքում աշակերտները կատարել են երեքական առաջադրանքներ մաթեմատիկայից և ֆիզիկայից, աշխատանքների լուծումները քննարկել են տեսադասերի օգնությամբ, որոնց մի մասը տեսանկարահանվել և ուղարկվել է իրենց համար ստեղծված էլ. փոստի հասցեներին: Այդ ընթացքում աշակերտները հնարավորություն են ստացել ձեռք բերել նոր S2S հմտություններ և օգտվել իրենց համար ստեղծված էլ. փոստի հասցեներից:

Ծրագրից դուրս անցկացվել է լրացուցիչ երեք առցանց հանդիպում հայոց լեզու, պատմություն և քիմիա առարկաներից: Այդ առցանց դասերը մասնակիցները համաձայնեցրել են փոխադարձ այցելությունների ժամանակ:

Էլ. փոստից օգտվելը և առցանց դասընթացների անցկացումը կատարվել է Office365 ծրագրային փաթեթի և Skype for Business միջավայրի կիրառմամբ:

***Ինչպե՞ս է կատարվել աշակերտների ընթացիկ և ամփոփիչ գնահատումը, ի՞նչ մոտեցումներ են կիրառվել:***

Ըստ աշխատանքային ծրագրի նախատեսված էր աշակերտներին սովորացնել տրամաբանական խնդիրների լուծում մաթեմատիկա և ֆիզիկա առարկաներից: Այն կատարվել է առցանց ռեժիմով, նախօրոք աշակերտների և համակարգող ուսուցիչների համար Office365 միջավայրում ստեղծելով էլ. փոստի համակարգ: Էլ. փոստի օգնությամբ ուսուցիչները համապատասխան առաջադրանքները /մաթեմատիկա և ֆիզիկա առարկաներից 7-րդ, 8-րդ և 9-րդ դասարանների համար կազմվել է 3-ական առաջադրանք/ ուղարկել են գործընկեր դպրոցների աշակերտներին և ստացել պատասխաններ ինչպես սկանավորված, այնպես էլ Word տեքստային խմբագրով: Ուսուցիչների կողմից կատարվել են աշխատանքների ստուգումներ և պատասխանները ուղարկվել են բոլոր աշակերտներին: Միաժամանակ կատարվել է տեսադասերի անցկացում Skype for Business ծրագրային միջավայրի օգնությամբ, որի ընթացքում վերլուծվել են կատրված աշխատանքները և տրվել համապատասխան ցուցումներ:

***Գործընթացի արդյունավետությունը ինչ գործիքակազմով և չափանիշներով կարել է չափել: /Ձեր փորձը/***

Մշտադիտարկման և համապատասխան ծրագրերի իրականացման միջոցով որոշել կատարված աշխատանքների արդյունավետությունը: Ամբողջ գործընթացը վստահել

կազմակերպչական հմտություններով օժտված անձի, պահպանել և պարբերաբար ստանալ կատարված աշխատանքների վետաբերյալ տեղեկատվություն: Ողջ գործընթացը թե դրական, և թե բացասական կողմերով լուսաբանել: Ցանկալի է այդ ամենը պարբերաբար հրապարակել որևէ կայքէջում, խրախուսելով գործընկեր դպրոցների ուսուցիչների և աշակերտների հրապարակումները: Առաջարկում ենք մեր փորձը [www.fizmat.am](http://www.fizmat.am) կայքի ԳՈՐԾԸՆԿԵՐ ԴՊՐՈՑՆԵՐ էջում լուսաբանումը և Office365-ի ծրագրային փաթեթի OneDrive միջավայրում տեսանյութերի պահպանումը:

**Գործընթացի ընթացքում գտնված լուծումներ, որոնք կարող են կիրառելի լինել այլ դպրոցների համար ևս:**

Գործընթացի ընթացքում օգտագործվել է Microsoft ընկերության ծրագրային միջոցները, որոնցից մենք օգտագործել ենք էլ.փոստից օգտվելու և առցանց դասընթացների անցկացման Office365 ծրագրային փաթեթը և Skype for Business միջավայրը: Այն միանշանակ կիրառել է նաև այլ դպրոցների համար:

**Խոչընդոտներ, որոնք հանդիպել են և ինչպիսի լուծումներ են տրվել:**

- Հիմնական խոչընդոտներն են՝
- որակյալ ինտերնետ կապը համագործակցող դպրոցների միջև,
  - լրացուցիչ տեխնիկական և թվային միոցների առկայությունը գործընկեր դպրոցներում, մասնավորապես, պրոյեկտորներ կամ մեծ թվային էկրաններ, որոնք միացված են համացանցին,
  - լրացուցիչ այլ արտաքին սարքավորումներ, որոնք կհեշտացնեն դասապրոցեսը /որակյալ վեբկամերաներ, դինամիկներ և այլն/,
  - հաճախակի են էլեկտրական հոսանքի բացակայությունը գյուղական վայրերում,
  - ինտերնետ կապի հաճախակի բացակայությունը:

**Եզրակացություն**

Առկա պայմաններում և ներկա իրավիճակում կարելի է իրագործել նման ծրագիր, եթե կատարվեն համապատասխան ծրագրերի, մեթոդաբանության, ֆինանսական և տեխնիկական միջոցների հատկացման, ՏՀՏ ոլորտից բավարար գիտելիքներ ունեցող ուսուցիչների ներգրավմամբ և խրախուսմամբ:

Դավիթ Մինասյան,  
ԵՊՀ-ին առընթեր Ա.Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցի համակարգող